$$5 \times 4 =$$

$$5 \times 5 =$$

$$5 \times 6 =$$

$$5 \times 7 =$$

$$5 \times 8 =$$

$$5 \times 9 =$$

$$5 \times 10 =$$

264. Գրեցեք 5-ի բազմապատկման աղյուսակը:

265. Մի վեցորյակում կա 5 բանվորական որ քանի՞ բանվորական որ կա 3 վեցորյակում, 5 վեցորյակում:

266. 1 մարդու որական նորման հաժաաթ է 5 հա: Ինչքան կլինի՞ 5 մարդու, 7 մարդու, 9 մարդու նորման:

267. 4 հատ հինգկողմանոցը քանի՞ կողմերի չե հաժաաթ: 7 հատ հինգ կողմանոցը, 5 հատ հինգկողմանոցը:

268. Մի խուրձ հաճարի քաշը հաժաաթ է 5 կգ: 3 այգիտի խուրձի քաշն ինչքա՞ն է, 7 հատի՞նք. 9 հատի՞նք:

269. Կոպերատիվից գնած հացին պետք էր վճարել 28 կոպեկ: Տնտեսուհին գանձապահին տվեց 4 հատ 5-կոպեկանոց, և 3 հատ 3 կոպեկանոց: Մանրոն (մանր շրամ) պե՞տք է ստանա արդյոք և ինչքա՞ն:

270. Լուծեցեք հետևյալ որինակները՝

$$3 \times 6 = \quad 3 \times 8 = \quad 5 + 8 = \quad 4 \times 8 =$$

$$4 \times 5 = \quad 5 \times 7 = \quad 4 \times 7 = \quad 5 \times 9 =$$

$$5 \times 6 = \quad 4 \times 6 = \quad 4 \times 9 = \quad 3 \times 8 =$$

$$2 \times 7 = \quad 5 \times 4 = \quad 4 \times 4 = \quad 3 \times 5 =$$

271. Կազմեցեք 6-ի բազմապատկման աղյուսակը: Արդյունքներն իմացեք գումարման միջոցով: Լուծումը գրեցեք տետրում:

272. Կազմեցեք 6-ի բազմապատկման աղյուսակը, փոխարինելով գումարումը բազմապատկումով: Լուծումը գրեցեք տետրում:

273. Ձմրանը մի կթողին ընկնում է 6 կով: 4 կթողին քանի՞ կով է ընկնում. 7 կթողի՞ն, 9 կթողի՞ն:

274. Յուրաքանչյուր պալտին պետք է 6 մետր 2 պալտին քանի՞ մետր է պետք. 5 պալտի՞ն, 7 պալտի՞ն:

275. Մի տակառին հազցնում են 6 շրջանակ 4 տու-
կառին քանի՞ շրջանակ պետք է հազցնեն 5 տակառի՞ն,
7 տակառի՞ն:

276. Անշափահասը գործարանում աշխատում է 6
ժամ: Քանի՞ ժամ կաշխատի 3 որում, 8 որում, 9 ո-
րում:

277. Հասակավոր մարդուն մի ձեռք սպիտակեղեն
կաշեյու համար պետք է 5 մ քաթան, իսկ անշափահասին՝
4 մ: Հասակավորին 8 և անշափահասին 5 ձեռք սպիտա-
կեղեն կարելու համար քանի՞ մետր քաթան է պետք:

278. Կազմեցեք 7 թվի բազմապատկման աղյուսակը՝
գումարումը փոխարինելով բազմապատկումով: Լուծումը
գրեցեք ձեր տետրում:

279. Բանվորը գործարանում որակյա աշխատում է
7 ժամ: 5 բանվորական որում քանի՞ ժամ կաշխատի:

280. Ամեն մի սայլի վրա դարսեցին 7 պարկ վար-
սակ: Քանի՞ պարկ կարելի չե գարսել 4 սայլի վրա, 7
սայլի, 9 սայլի:

281. Վորդին 5 տարեկան է: Հայրը վորդուց 5 ան-
գամ մեծ է: Հայրը քանի՞ տարեկան է:

282. Սերմագործով մի որում կարելի չե գտել 7 ս
սերմ: Մի սերմագործով 7 որում քանի՞ տոնն սերմ
կարելի չե գտել: Իսկ 9 որում:

283. Լուծեցեք հետևյալ որինալիները.

$$\begin{array}{cccc} 4 \times 7 = & 2 \times 9 = & 5 \times 5 = & 6 \times 9 = \\ 5 \times 8 = & 4 \times 6 = & 6 \times 7 = & 5 \times 8 = \\ 6 \times 5 = & 7 \times 8 = & 7 \times 5 = & 7 \times 9 = \end{array}$$

284. Եազմեցեք 8-ի բազմապատկման աղյուսակը՝
փոխարինելով գումարումը բազմապատկումով: Լուծումը

285. Շաղաքանով ցանեցին 8 ց վարսակ: Բերքն
ստացվեց մեկին վեց, Նույն մեծության հողի վրա փորձի
համար շարքացանով ցանեցին 7 ց վարսակ: Բերքն
ստացվեց մեկին ինն: Վո՞ր հողամասից ավելի ստացվեց
և ինչքանով:

286. 1 հա արեածաղկի գլուխները մի որում կբա-
րելու համար պահանջվում է 8 մարդ: Քանի՞ մարդ կպա-
հանջվի 7 հա արեածաղկի մի որում հավաքելու համար,
5 հա, 8 հա, 9 հա՝ դարձյալ մի որում հավաքելու հա-
մար:

287. Բանջարանոցում տնկել են կաղամբ, ամեն մի
շարքում 8 գլուխ: Քանի՞ կաղամբ է տնկված 3 շարքում,
5 շարքում, 7 շարքում, 9 շարքում:

288. Ձուլափղ չորս մեքենական դադգյահների վրա
աշխատելով, մի ժամում արտադրում է 8 մ մահուդ: 7
ժամում քանի՞ մետր կարտադրի:

289. Շարքացանով մի որում կարելի չե ցանել 8 հա:
Մի շարքացանով քանի՞ հեկտար կարելի չե ցանել 6
որում, 9 որում, 4 որում:

290. Կազմեցեք 9-ի բազմապատկման աղյուսակը,
գումարումը փոխարինելով բազմապատկումով: Լուծումը
գրեցեք տետրում:

291. 1 հա վարսակի բերքը հավասար է 9 ցենտ-
ներին: Վո՞րքան կլինի՞ 3 հա վարսակի բերքը, 5 հա,
7 հա, 9 հա վարսակի բերքը:

292. Աղի կիլոգրամն արժե 9 կոպ: Ինչքա՞ն պետք
է վճարեն՝ 4 կգ, 8 կգ, 7 կգ, 5 կգ, 10 կգ
աղին:

293. Աշակերտը գնեց 3 մատիտ՝ հատը 9 կոպեկով:

և 8 տետր՝ հատը 6 կոպեկով: 1 ուղբուղ ղիմաց ինչքա՞ն մանրոն (մանր դրամ) պետք է ստանա աշակերտը:

294. Բազմապատկեցեք 7-ը 8-ով: Տեղափոխեցեք թվերը և բազմապատկեցեք 8-ը 7-ով: Միևնույն արդյունքներն ստացվում ե՞ն թե՞ վոչ:

295. Բազմապատկեցեք 5-ը 6-ով: Տեղափոխեցեք թվերը և բազմապատկեցեք 6-ը 5-ով: Միևնույն արդյունքներն ստացվեցի՞ն, թե՞ վոչ:

296. Բազմապատկելիս յեթե արտադրիչները տեղափոխենք, արտադրյալը կփոխվի՞, թե՞ վոչ:

297. Վո՞ր ամենամեծ թիվը կստանա՞րք՝ միանիշ թիվը միանիշ թվով բազմապատկելով: Վո՞ր ամենափոքր թիվը կստանանք:

298. Հուձեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{ccccc} 4 \times 7 = & 3 \times 9 = & 5 \times 5 = & 5 \times 9 = & 4 \times 8 = \\ 5 \times 8 = & 4 \times 6 = & 6 \times 7 = & 6 \times 4 = & 5 \times 9 = \\ 6 \times 9 = & 6 \times 8 = & 4 \times 9 = & 5 \times 6 = & 6 \times 6 = \end{array}$$

299. Հուձեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{ccccc} 7 \times 6 = & 8 \times 7 = & 9 \times 8 = & 9 \times 9 = & 4 \times 7 = \\ 7 \times 9 = & 9 \times 6 = & 8 \times 5 = & 5 \times 9 = & 9 \times 4 = \\ 8 \times 4 = & 7 \times 5 = & 9 \times 7 = & 6 \times 7 = & 7 \times 7 = \\ 9 \times 5 = & 8 \times 6 = & 8 \times 8 = & 8 \times 9 = & 6 \times 9 = \end{array}$$

300. 1 հա մարդագետին ցանելու համար վերցրին՝ 7 կգ. առվույտի, 9 կգ դաշտի. ֆլետնի և 8 կգ այլ խոտերի սերմեր: 7 հա մարդագետին ցանելու համար յուրաքանչյուր խոտից ինչքա՞ն սերմ է պետք:

301. Բանվորը բնակարանի համար ամսական վճարում

է 7 ուղբի, կոմունալ ծախքերի համար՝ 2 ուղբի: Կես սարում ընդամենն ինչքա՞ն պետք է վճարի:

Պյութագորոսի բազմապատկման աղյուսակը.

7-որդ 8-որդ
սյունակ սյունակ

1	2	3	4	5	6	7	8	9
2	4	6	8	10	12	14	16	18
3	6	9	12	15	18	21	24	27
4	8	12	16	20	24	28	32	36
5	10	15	20	25	30	35	40	45
6	12	18	24	30	36	42	48	54
7	14	21	28	35	42	49	56	63
8	16	24	32	40	48	56	64	72
9	18	27	36	45	54	63	72	81

7-որդ
սող

8-որդ
սող

Սլաքներով ցույց են արված 7×8 -ի և 8×7 -ի արտադրյալները:

302. Ոգտագործելով Պյութագորոսի աղյուսակը, չե՞ք հետևյալ թվերի արտադրյալները.

$$\begin{array}{llll}
 5 \times 6 = & 9 \times 3 = & 5 \times 9 = & 8 \times 9 = \\
 8 \times 4 = & 6 \times 9 = & 7 \times 6 = & 9 \times 8 = \\
 6 \times 3 = & 8 \times 8 = & 9 \times 9 = & 9 \times 5 = \\
 8 \times 7 = & 9 \times 8 = & 8 \times 6 = & 8 \times 3 = \\
 4 \times 9 = & 7 \times 9 = & 6 \times 4 = & 8 \times 5 = \\
 5 + 8 = & 4 \times 8 = & 4 \times 5 = & 7 + 7 =
 \end{array}$$

303. Աղյուսակում ի՞նչ թվեր են բաց թողնված.

1	2	3	4	5	6	7	8	9
2	4		8	10		14	16	18
3	6	9		15	18	21	24	27
4	8		16	20	24		32	
5	10	15	20		30	35	40	45
6		18	24	30	36		48	54
7	14	21		35		49	56	
8	16	24	32	40		56		72
6	18		36	40	54	63	72	

ԲԱԶՄԱՆԻՇ ԹՎԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ ՄԻԱՆԻՇ ԹՎՈՎ

Մանվածքի կարժը (1000 մ յերկարությամբ) կշռում
է 23 գ. Այդպիսի 3 կարժը քանի՞ գրամ է կշռում:

Խնդիրը լուծենք գումարումով:

Խնդիրը լուծենք բազմապատկումով:

$$\begin{array}{r}
 23 \\
 + 23 \\
 \hline
 23 \\
 \hline
 69
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 23 - \text{բազմապատկելի} \\
 \times 3 - \text{բազմապատկիչ} \\
 \hline
 69 - \text{արտադրյալ}
 \end{array}$$

304. Ի՞նչպես է կոչվում այն թիվը, վոր բազմապատկում ենք:

305. Ի՞նչպես է կոչվում այն թիվը, վորով բազմապատկում ենք:

306. Այն թվերը, վոր բազմապատկում ենք, ուրիշ կերպ ի՞նչպես են կոչվում:

307. Բազմապատկումից ստացված թիվը ի՞նչպես է կոչվում:

308. Բազմապատկումը վոր կարգից ենք սկսում:

309. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$14 \times 2 = \quad 13 \times 3 = \quad 32 \times 3 =$$

$$12 \times 4 = \quad 34 \times 2 = \quad 21 \times 4 =$$

310. Զուհատը 6 ավտոմատ դալդյահի վրա աշխատելով 1 ժամում արտադրում է 18 մ գործվածք: Վորքան է արտադրում 2 ժամում, վորքան մի հերթին (7 ժամ):

$$\begin{array}{r}
 18 \\
 \times 2 \\
 \hline
 36
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 18 \\
 \times 7 \\
 \hline
 126
 \end{array}$$

Բազմապատկման ժամանակ բազմապատկելու միավորից ստացած տասնյակներն ի՞նչ ենք անում:

Յերկանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվով՝ սկսում են միավորների բազմապատկումից:

$$\begin{array}{r} 25 \\ \times 6 \\ \hline 150 \end{array}$$

311. Լուծեցեք հետևյալ որինակաները:

$31 \times 3 =$	$49 \times 7 =$	$35 \times 4 =$	$52 \times 4 =$
$21 \times 4 =$	$63 \times 5 =$	$85 \times 6 =$	$61 \times 5 =$
$28 \times 2 =$	$48 \times 8 =$	$95 \times 8 =$	$51 \times 8 =$
$36 \times 3 =$	$36 \times 9 =$	$54 \times 5 =$	$43 \times 7 =$
$57 \times 4 =$	$92 \times 6 =$	$69 \times 9 =$	$91 \times 6 =$
$83 \times 9 =$	$49 \times 7 =$	$37 \times 7 =$	$58 \times 9 =$
$75 \times 5 =$	$28 \times 4 =$	$96 \times 8 =$	$73 \times 8 =$

312. Ելեկտրական լամպը (25 մոմանոց) մի ժամում ծախսում է 1 կոպեկի եներգիա: 7 ուրում ի՞նչ գումարի եներգիա կպահանջի, յեթե լամպն ուրական վառվի 6 ժամ 8 ժամ:

313. Շոգեկալսիչով մի ուրում կարելի լինի կալսել 75 հա աշնանացանի բերք: 1 շոգեկալսիչը 5 ուրում քանի՞ հեկտար կկալսի:

314. Ըստ նորմայի 1 կոտնատեսականն ուրական պետք է բառնա 15 սայլ գոմաղբ: Մի ուրում քանի՞ սայլ կբառնան 6 հոգին, 8 հոգին:

315. 1 հա հաճարի բերքը չափարարացրած հողում հավասար է 7 ց, իսկ պարարտացրած հողում՝ 3 անգամ ավելի: Վորքա՞ն է 8 հա պարարտացրած հողից ստացված հաճարի բերքը:

316. Չորս բանվոր մի ուրում թափիչով ծեծում են 5 ց հացահատիկ, իսկ բարդ կալսիչով՝ 5 անգամ ավելի: Բարդ կալսիչով 6 ուրում ինչքա՞ն հացահատիկ են կալսում:

317. 1 բանվորը ձեռքով ուրական հանում է 4 ց սորժ, իսկ մեքենայով՝ 4 անգամ ավելի: 1 բանվորն 8 ուրում մեքենայով ինչքա՞ն սորժ կհանի:

318. 1 բանվորը հին դոմնաների վրա աշխատելիս ուրական հալում է 9 ց թուշ, իսկ նոր դոմնաների վրա 8 անգամ ավելի: 7 բանվորը նոր դոմնաների վրա աշխատելով՝ մի ուրում ինչքա՞ն թուշ կհալեն:

319. 1 հա ճահճոտ տեղից ստացվում է միջին թվով 7 ց հունձ: Ճահիճները չորացնելուց և խոտ ցանելուց հետո ստացվում է 5 անգամ ավելի: 9 հա չորացնելուց հետո ինչքա՞ն հունձ կստացվի:

Ցեմենտով լի տակառը կշռում է 123 կգ: Ինչքա՞ն է կշռում 3 տակառ ցեմենտը, 4 տակառը:

$$\begin{array}{r} 123 \\ \times 3 \\ \hline 369 \end{array}$$

$$\begin{array}{r} 123 \\ \times 4 \\ \hline 492 \end{array}$$

320. Լուծեցեք հետևյալ որինակաները:

$234 \times 2 =$	$352 \times 5 =$	$325 \times 8 =$	$354 \times 6 =$
$347 \times 2 =$	$265 \times 4 =$	$436 \times 9 =$	$875 \times 8 =$
$824 \times 3 =$	$938 \times 7 =$	$659 \times 6 =$	$726 \times 6 =$

321. Մի խոփանի գութանի ընդգրկած (ակոս) լայնությունը հավասար է 356 մմ. Ինչքա՞ն է լեռի-
խոփանի գութանի ընդգրկած լայնությունը, չորսխոփանի,
վեցխոփանի գութանինը:

322. Գյուղացին մինչ կոլտնտեսություն մանելն իր
տնտեսությունից ստանում էր տարեկան 364ռ. յեկամուտ:
Կոլտնտեսությունում նրա յեկամուտն ավելացավ 4 ան-
գամ: Գյուղացին կոլտնտեսությունում տարեկան ինչքա՞ն
յեկամուտ ստացավ:

323. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{llll} 365 \times 9 = & 596 \times 7 = & 627 \times 5 = & 675 \times 8 = \\ 876 \times 8 = & 487 \times 8 = & 842 \times 9 = & 325 \times 5 = \\ 725 \times 6 = & 952 \times 5 = & 687 \times 6 = & 485 \times 7 = \end{array}$$

324. 1932 թվին կոլտնտեսական գյուղատնտեսու-
թյունը սոցիալիստական արգելաբերությունից որական
ստանում էր 4 նոր ՄՏԿ: Մի տարում (365 որ) կոլտնտե-
սական գյուղատնտեսությունը քանի՞ ՄՏԿ տվեց:

325. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{llll} 4136 \times 2 = & 7375 \times 4 = & 9375 \times 8 = & 8459 \times 8 = \\ 5729 \times 3 = & 9918 \times 5 = & 8291 \times 9 = & 7963 \times 9 = \end{array}$$

326. Մի մետր յերկաթը (21 մմ հաստությամբ)
կշռում է 3462 գ: Նույն յերկաթի 8 մ-ն ինչքա՞ն
կշռի:

327 Արհեստանոցը գնեց 285 տուփ կոճակ՝ տուփը
7 ուրբով: Վո՞րքան վճարեց:

328. ՄՏԿ գնեց 8 տրակտոր՝ 2876-ական ուրբով
և 4 կոմբայն՝ 3658-ական ուրբով: Պատվեր տալիս

կանխավճար տվեց 9403 ուրբի: Պատվերն ստանալիս
քանի՞ ուրբի պետք է վճարի:

ԶԵՐՈՆԵՐԸ ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ ՎԵՐՋՈՒՄ ՅԵՎ
ՄԵԶՏԵՂՈՒՄ

329. Գործարանում յուրաքանչյուր պարկի մեջ
լցնում են 140 կգ ցեմենտ: Վո՞րքան է կշռում 3 պարկը:

$$\begin{array}{r} 140 \\ \times 3 \\ \hline 420 \text{ (կգ)} \end{array}$$

Բազմապատկելիս վերջում գտնվող զերոն պե՞տք է
բազմապատկել, թե՞ վո՞չ:

330. 1 հա ճահճոտ մարգագետնից ստացան 1700
կգ խոտ: 5 հա մարգագետնից ինչքա՞ն կստանան:

$$\begin{array}{r} 1700 \\ \times 5 \\ \hline 8500 \text{ (կգ)} \end{array} \quad \text{Լուծումն արտադրեցեք տետրում.}$$

331. Սիրսկարիչը մի ժամում կտրում է 16000 կգ
կանաչեղեն: Սիրսկարիչը 8 ժամ աշխատելով, քանի՞
կիլոգրամ է կտրում:

$$\begin{array}{r} 16000 \\ \times 8 \\ \hline 128000 \text{ (կգ)} \end{array} \quad \text{Լուծումն արտադրեցեք տետրում.}$$

332. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lll} 370 \times 6 = & 2700 \times 6 = & 19000 \times 5 = \\ 560 \times 8 = & 3900 \times 8 = & 28000 \times 4 = \\ 390 \times 9 = & 8400 \times 5 = & 35000 \times 8 = \\ 960 \times 5 = & 6500 \times 8 = & 67000 \times 9 = \end{array}$$

333. Պաղտի գործարանը 1931 թվին բաց թողեց 40 հանքային ելեքարաքարշ, իսկ 1932 թվին՝ 6 անգամ ավելի: Գործարանը 1932 թվին քանի՞ հանքային ելեք-արաքարշ բաց թողեց:

334. «Շարիկոպողչիպնիկ» գործարանը (Մոսկվա) 1932 թվի մայիսի յերկրորդ կիսին որական միջին թվով բաց թողեց 1250 առանցքակար Գործարանը 5 բանվորա-կան որում քանի՞ առանցքակալ բաց թողեց:

335. Հարվածային բրիգադն որական հավաքեց 200 պարկ կարտոֆիլ, իսկ վոչ հարվածայինը՝ 140 պարկ 5 որում հարվածային բրիգադը քանի՞ պարկ ավելի կարտո-ֆիլ հավաքեց, քան վոչ հարվածային բրիգադը:

33. Ստալինգրադի տրակտորի գործարանը 1931 թվին որական միջին թվով բաց էր թողնում 130 տրակ-տոր, «Կարմիր պուտիլովեց»-ը՝ 90 տրակտոր, իսկ Նար-կովի տրակտորի գործարանը՝ 50 տրակտոր: 3 գործարան-ները 6 որում միջին թվով քանի՞ տրակտոր ելին տալիս:

337. ՄՏԿ պահանջում է 9 գութան, 6 տափան, 7 կուլտիվատոր և 4 կալսիչ: Վորքա՞ն պիտի արժենա ամբողջ ինվենտարը, յեթե գութանն արժե 550 ռուբ., տափանը՝ 450 ռուբ., կուլտիվատորը՝ 260 ռուբ. և կալ-սիչը՝ 700 ռուբլի:

338. Մի խորանարդ մետր կարտոֆիլը կշռում է 703 կգ, Վո՞րքան է կշռում 3 խոր. մ կարտոֆիլը, 4 խոր.

$$\begin{array}{r} 703 \text{ (կգ)} \\ \times 3 \\ \hline 2109 \text{ (կգ)} \end{array}$$

$$\begin{array}{r} 703 \text{ (կգ)} \\ \times 4 \\ \hline 2812 \text{ (կգ)} \end{array}$$

Ի՞նչու 703-ը 3-ով բազմապատկելիս տասնավորների տեղը զերո դրիք: Ի՞նչու 703-ը 4-ով բազմապատկելիս տասնավորի տեղը 1 դրիք:

339. Լուծեցեք հետևյալ որինակները.

$204 \times 3 =$	$608 \times 9 =$	$2080 \times 7 =$	$4050 \times 6 =$
$705 \times 7 =$	$3060 \times 4 =$	$9070 \times 6 =$	$5080 \times 5 =$
$809 \times 4 =$	$6090 \times 5 =$	$7040 \times 3 =$	$6040 \times 8 =$
$907 \times 5 =$	$8050 \times 8 =$	$5070 \times 7 =$	$9050 \times 9 =$
$405 \times 8 =$	$7906 \times 9 =$	$3060 \times 9 =$	$6980 \times 7 =$

340. 1մ մահուդ գործելու համար պետք է 408 գ մանվածք, 6մ մահուդ գործելու համար քանի կգ ման-վածք է պետք:

341. Կարմիր-պրեսնյան շրջանում (Մոսկվա) 1926 թվին ամեն մի բնակչի կուլտ—կրթական կարիքների վրա ծախսեցին շու. 60 կոպեկ (260 կոպ.), իսկ 1932 թ. 7 անգամ ավելի: 1932 թվին, մի բնակչի լուսավորության վրա ծախսած գումարը 1926 թվի ծախսած գումարից ինչքա՞ն է ավելի:

342. Վաղահերկ ցելի 1 հա հաճարի բերքը՝ 2506 կգ է, իսկ ուշ հերկած ցելինը՝ 10460 կգ: Վաղածած ցելի 7 հա բերքն ինչքա՞ն ավելի յե ուշ հերկած ցելի 7 հա բերքից:

343. 1 հեկտարից ստացված կարտոֆիլի բերքը խորհանտեսություններում հավասար էր 10960 կգ, կոլտնտեսություններում՝ 10460 և անհատական տնտես-ություններում 9650 կգ: Խորհանտեսությունում 8 հեկ-

տարից ստացած բերքը ինչքանո՞վ է ավելի կոլանաե-
ռւթյան ստացած բերքից: Ինչքանո՞վ է ավելի անհատա-
կան տնտեսությանից ստացած բերքից:

344. Քանի՞ կիրորամ խոտ է ստացվում 1 հա մարգա-
ղեանից.

Զրովի մարգա- ղեանից	Անշրդի մարգա- ղեանից	Ցածրա- վալը մարգ.	Ճահճա- յին մարգ.	Պատկած խոտան հողերից	Անտառա հողերից
2030	1050	1570	1700	1080	1480

Հաշվեցեք առանձին՝ յուրաքանչյուր տեսակի 3 հա
մարգաղեանից քանի՞ կիրորամ խոտ է ստացվում: Վեր-
ջան է ստացվում, 5 հա-ից, 8 հա-ից:

345. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lll} 1403 \times 8 = & 2700 \times 9 = & 3007 \times 8 = \\ 356 \times 9 = & 496 \times 8 = & 3476 \times 7 = \\ 687 \times 5 = & 567 \times 9 = & 8976 \times 6 = \\ 608 \times 6 = & 8009 \times 7 = & 6205 \times 9 = \\ 37800 \times 9 = & 13004 \times 8 = & 8040 \times 6 = \end{array}$$

ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻԱՆԻՇ ԹՎԻ ՎՐԱ

56 մ գործվածքը պետք է հավասար բաժանել 7 բան-
վորի վրա: Ամեն մեկը քանի՞ մետր կստանա:

Այն գործողությունը, վորով լուծում ենք այս
խնդիրը, կոչվում է բաժանում: Բաժանման գործողու-
թյունը գրում ենք այսպես՝

$$56 : 7 = 8$$

Ամեն մեկը կստանա 8 մ գործվածք:

Այն թիվը, վորը բաժանում ենք (56), կոչվում
է բաժանելի:

Այն թիվը, վորի վրա բաժանում ենք (7),
կոչվում է բաժանարար:

Այն թիվը, վորն ստացվում է բաժանման գոր-
ծողությունից (8), կոչվում է քանորդ:

Շարքացանով մի որում կարելի չէ ցանել 7 հա:
Մի որում 63 հա ցանելու համար քանի՞ շարքացան
մեքենա յե պետք:

$$63 : 7 = 9$$

9 շարքացան է պետք:

346. Ինչպես է կոչվում այն թիվը, վորը բաժանում
ենք:

347. Ինչպես է կոչվում այն թիվը, վորի վրա
բաժանում ենք:

348. Բաժանումից ստացված թիվն ինչպես է
կոչվում:

349. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lllll} 12 : 3 = & 12 : 4 = & 24 : 6 = & 18 : 3 = & 24 : 9 = \\ 16 : 8 = & 18 : 6 = & 16 : 4 = & 28 : 7 = & 21 : 3 = \end{array}$$

350. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lllll} 30 : 5 = & 56 : 7 = & 54 : 9 = & 72 : 8 = & 54 : 9 = \\ 32 : 8 = & 35 : 5 = & 45 : 5 = & 35 : 7 = & 64 : 8 = \\ 72 : 9 = & 48 : 6 = & 81 : 9 = & 42 : 6 = & 63 : 7 = \end{array}$$

351. Տասնհինգ կողեկանոցը քանի՞ հինգ կողեկանոցի յե հավասար: Քսան կողեկանոցը, հիսուն կողեկանոցը:

352. 8 հոգուց բաղկացած բրիգադն ամսական տվեց 24 ռ թուղի ձուլվածք: Միջին թվով ամեն մի հոգուն քանի տոնն թուղի է ընկնում:

353. 9 խոր. մետր սիրտը կշռում է 45 կգ: 1 խոր. մետր սիրտն ինչքա՞ն է կշռում:

354. Անիթեներից մեկի տրամաչափը (լայնքսը) հավասար է 36 մ, մյուս անվի տրամաչափը 4 անգամ փոքր է Վոլքան է յերկրորդ անվի տրամաչափը:

355. 1 հեկտարից ստացված վուշը տնայնագործական յեղանակներով քրքրելու և թակելու համար անհրաժեշտ է 56 մարդո՞ր¹), իսկ գործարանային յեղանակով, 8 մարդոր: Մեքենան վուշի մշակումը քանի՞ անգամ է արագացնում:

356. Սերմադաշտով 1 ժամում կարելի յե դաել 5 ց հացահատիկ: 45 ց հացահատիկը դաելու համար քանի՞ ժամ է պետք:

357. Կոլտնտեսությունը մթերման կայանն ուղարկեց 56 ց ցորեն և 42 ց հաճար: Հացահատիկը տեղափոխելու համար ընդամենը քանի՞ սալ է պետք, յեթե մեկ սալի վրա բեռնում էյին 7 ց ցորեն, և կամ 6 ց հաճար:

358. Մանր գյուղացիական տնտեսությունը 1 հա ցորենից ստանում է 8 ց, իսկ կոլտնտեսությունը՝ 9 ց: Այս յերկու տիպի տնտեսություններից յուրաքանչյուրը

¹) Մի մարդու 1 բանվորական օրվա ընթացքում կատարած աշխատանքը կոչվում է մարդոր:

քանի՞ հեկտար պետք է ցանի, վոր 72 ց հացահատիկ ստանա:

359. 8 զրչածալրի և 6 մատիտի վճարեցին 72 կոպ.: Ինչ արժեք 1 զրչածալրը, յեթե 1 մատիտն արժեք 8 կոպ.:

ԲԱՁՄԱՊԱՏԿՄԱՆ ՅԵՎ ԲԱԺԱՆՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

$$54 : 9 = 6$$

$$9 \times 6 = 54$$

$$8 \times 4 = 32$$

$$32 : 4 = 8$$

Վորպեսզի ստուգենք, թե բաժանումը ճիշտ է կատարված արդյոք, պետք է քանորդը բազմապատկենք բաժանարարով: Յեթե բազմապատկումից ստացած թիվը հավասար է բաժանելուն, ապա բաժանումը ճիշտ է կատարված:

Վորպեսզի ստուգենք, թե բազմապատկումը ճիշտ է կատարված, պետք է արտադրյալը բաժանենք արտադրիչներից մեկի վրա: Յեթե բաժանումից ստացած թիվը հավասար է մյուս արտադրիչին, ապա բազմապատկումը ճիշտ է կատարված:

360. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$4 \times 6 =$$

$$8 \times 8 =$$

$$56 : 7 =$$

$$24 : 6 =$$

$$64 : 8 =$$

$$7 \times 9 =$$

$$24 : 4 =$$

$$9 \times 9 =$$

$$63 : 9 =$$

$$5 \times 5 =$$

$$81 : 9 =$$

$$63 : 7 =$$

$$25 : 5 =$$

$$7 \times 7 =$$

$$6 \times 6 =$$

$$4 \times 9 =$$

$$49 : 7 =$$

$$36 : 6 =$$

$$36 : 9 =$$

$$7 \times 8 =$$

$$5 \times 9 =$$

$$36 : 4 =$$

$$56 : 8 =$$

$$45 : 9 =$$

361. Լուծեցեք հետևյալ որինակները և արտադրեցեք լուծման ճշտությունը.

$6 \times 7 =$	$7 \times 7 =$	$8 \times 8 =$	$63 : 7 =$
$56 : 8 =$	$54 : 6 =$	$25 : 5 =$	$7 \times 6 =$
$5 \times 6 =$	$7 \times 9 =$	$5 \times 9 =$	$64 : 8 =$
$36 : 6 =$	$40 : 5 =$	$36 : 6 =$	$7 \times 7 =$
$48 : 8 =$	$8 \times 4 =$	$9 \times 9 =$	$42 : 7 =$
$7 \times 8 =$	$28 : 7 =$	$72 : 8 =$	$8 \times 9 =$

362. Լուծեցեք հետևյալ որինակները և ստուգեցեք լուծման ճշտությունը.

$36 : 9 =$	$9 \times 8 =$	$8 \times 5 =$	$6 \times 9 =$
$6 \times 7 =$	$45 : 9 =$	$49 : 7 =$	$56 : 7 =$
$3 \times 9 =$	$5 \times 7 =$	$18 : 3 =$	$42 : 6 =$
$72 : 9 =$	$32 : 8 =$	$24 : 4 =$	$63 : 9 =$
$9 \times 7 =$	$7 \times 5 =$	$35 : 7 =$	$64 : 8 =$
$54 : 9 =$	$9 \times 5 =$	$30 : 6 =$	$45 : 5 =$

1 սալի վրա բարձում են 4 ց հացահատիկ, 848 ց հացահատիկ փոխադրելու համար քանի՞ սալ ե պետք:

$$\begin{array}{r} 848 \overline{) 4} \\ \underline{8} \\ 4 \\ \underline{4} \\ 8 \\ \underline{8} \\ 0 \end{array}$$

Նախ 8 հարյուրավորը բաժանենք 4-ի վրա: Քանորդում կստանանք 2 հարյուրավոր: Ապա բաժանենք 4 տասնավորը 4-ի վրա: Քանորդում կստանանք 1 տասնավոր: Վերջապես 8 միավորը բաժանենք 4-ի վրա: Քանորդում կստանանք 2 միավոր: Լինդամենք քանորդում կստանանք 212.

212 սալ ե պետք:

363. Լուծեցեք հետևյալ որինակները.

$369 : 3 =$	$846 : 2 =$	$682 : 2 =$
$284 : 2 =$	$555 : 5 =$	$777 : 7 =$
$639 : 3 =$	$666 : 6 =$	$963 : 3 =$
$484 : 4 =$	$396 : 3 =$	$884 : 4 =$

ՄՆԱՑՈՐԴՈՎ ԲԱԺԱՆՈՒՄ

51 կիրոզրամ վարսակը քանի՞ որ կբավականացնի, յեթե որական տանք 8 կգ:

$$\begin{array}{r} 51 \overline{) 8} \\ \underline{48} \\ 3 \end{array}$$

Մնացորդը բաժանարարից միշտ փոքր պետք ե լինի:

3—մնացորդ

Մթերված վարսակից ձիուն 6 որ 8.ական կիրոզրամ վարսակ տվին: Վո՞րքան վարսակ եր մթերված, յեթե ելի 3 կգ վարսակ մնաց:

$$8 \times 6 = 48 \text{ կգ տրվեց ձիուն:}$$

$$48 + 3 = 51 \text{ կգ մթերված եր:}$$

Վորպեսզի ստուգենք, թե մնացորդով բաժանումը ճիշտ ենք կատարել արդյոք, պետք ե քանորդը բազմապատկենք բաժանարարով և ստացած արտադրյալին գումարենք մնացորդը: Յեթե ստացած նոր թիվը հավասար ե բաժանելուն, ապա բաժանումը ճիշտ ե կատարված:

364. Լուծեցեք հետևյալ որինակները.

$37 : 7 =$	$58 : 6 =$	$68 : 8 =$
$86 : 9 =$	$89 : 8 =$	$53 : 9 =$
$38 : 5 =$	$62 : 9 =$	$33 : 4 =$
$43 : 6 =$	$53 : 7 =$	$80 : 9 =$
$28 : 3 =$	$25 : 4 =$	$37 : 6 =$

365. Վո՞ր թիվը 7-ի վրա բաժանվելուց հետո քանորդում տալիս է 7, իսկ մնացորդում՝ 4:

366. Վո՞ր թիվը 9-ի վրա բաժանվելուց հետո քանորդում տալիս է 5, իսկ մնացորդում՝ 3:

367. Մահուդի կտորը 33 մետր եր: Այդ կտորից քանի՞ ձեռք կոստյում կարելի լի կարել, յեթե յուրաքանչյուր ձեռք կոստյումի համար պետք է 5 մ մահուդ:

368. 30 կգ խոտը ձիուն քանի՞ օր կբավականացնի, յեթե որական 4 կգ տանք:

369 5 հեկտարից հավաքեցին 85 ց բերք: Միջին թվով մի հեկտարից ինչքա՞ն հավաքեցին:

85 | 5
 5 17
 35
 35

8 տասնավորը բաժանենք 5-ի վրա: Քանորդում ստանում ենք 1 և մնացորդ՝ 3 տասնավոր: 3 տասնավորը վերածում ենք միավորների և ստանում ենք 30 միավոր ավելաց-

ներով նաև բաժանելու 5 միավորը, ստանում ենք 35 միավոր: 35 միավորը բաժանում ենք 5-ի վրա: Քանորդում ստանում ենք 7 միավոր: Քանորդում ընդամենը ստանում ենք 17:

Միջին բերքը՝ 1 հա-ից 17 ց:

Խնդրի ճշտությունն ստուգեցեք բազմապատկումով:

$$17 \times 5 = 85$$

370. Բնակարանային ընկերությունը բանկից ստացավ 735 ուղբի փոխառվածություն, վորը հանգրեց 5 ամսվա ընթացքում, հավասար մասերով, ինչքան եր ամսական հանգցնելիք դումարը:

$$\begin{array}{r} 735 \overline{) 5} \\ 5 \overline{) 147} \\ 23 \\ 20 \\ 35 \\ 35 \end{array}$$

7 հարյուրավորը բաժանում ենք 5-ի վրա: Քանորդում ստանում ենք 1 հարյուրավոր և մնացորդ՝ 2 հարյուրավոր: Հարյուրավորները վերածում ենք տասնավորների և ավելացնելով նրա վրա նաև բաժանելու 3 տասնավորն՝ ստանում ենք 23 տասնավոր: 23 տասնավորը բաժանում ենք 5-ի վրա: Քանորդում քանի՞ տասնավոր կստանանք:

Քանորդում ի՞նչպես ստացվեց 7 միավորը:

Խնդրի լուծումը գրեցեք տետրում:

371. Զուլհակը 6 ավտոմատ մեքենայով մի հերթի արտադրում է 136 մ մահուդ: 1 մեքենայով մի հերթին քանի՞ մետր կարտադրի:

$$\begin{array}{r} 138 \overline{) 6} \\ 12 \overline{) 23} \\ 18 \\ 18 \end{array}$$

1 հարյուրավորը 6-ի վրա բաժանելիս, քանորդում հարյուրավոր չի ստացվում:

1 հարյուրավորը վերածում ենք տասնավորի և ապա շարունակում ենք բաժա-

նումը:

Լուծման ճշտությունն ստուգեցեք բազմապատկումով:

372. Լուծեցեք հետևյալ որինակները:

668:4=	687:6=	486:6=	522:6=
972:3=	791:7=	584:8=	623:7=
595:5=	492:4=	684:9=	465:5=
784:7=	795:5=	435:5=	776:8=

373. Լուծեցեք հետևյալ որինակները:

476:7=	944:8=	975:3=	708:3=
352:4=	936:6=	635:5=	976:4=
736:8=	956:4=	882:6=	732:4=
774:9=	864:3=	959:7=	882:7=

374. Լուծեցեք հետևյալ որինակաները.

861:7=	912:8=	846:9=	945:7=
868:7=	762:6=	745:5=	874:6=
675:5=	540:4=	892:6=	735:5=
774:6=	816:6=	875:7=	712:4=

375. Լուծեցեք հետևյալ որինակաները.

1918:7=	2023:7=	5432:8=	4389:7=
1845:5=	2754:6=	3483:9=	5256:8=
2136:8=	3661:7=	4844:7=	8847:9=

376. Տրակտորով պետք է փարեն 39 հա: Այդ հողամասը քանի՞ որում կվարվի, յեթե տրակտորն որական վարում է 3 հա:

377. 48 թերթ թղթից քանի՞ տետրակ կարելի չի պատրաստել, եթե յուրաքանչյուր տետրակի վրա գործածվեն 4 թերթ թղթ:

378. Բրդադր 7 ժամում վերամշակեց 2836 մ ուն: 1 ժամում քանի՞ մետր է վերամշակում:

379. 9 հա առվ էտի դաշտից առաջին տարում հավաքեցին 351 ց խոտ, յերրորդ տարում՝ 387 ց, յերրորդ տարում՝ 297 ց և յերրորդ տարում՝ 225 ց: Հաշվեք, 1 հե տարից ստացված բերքը, խոտ տարիների:

380. Կոմունա ուն 1931 Վին 9 հա-ից հավաքեցին 90 ց ցորեն, իսկ 1932 թվին նույն հողամասից հավաքեցին 117 ց: 1932 թվին 1 հա-ից ստացան բերքը քանիսով ավելի յե 1931 թ.ի մի հկտարի բերքից:

3 շրտմաս կապար և 2 շրտմաս սնագ: 162 կգ ձուլվածքի մեջ յուրաքանչյուր մեծադից քանի՞ կիլոգրամ ա:

Յուցմունք. Ձուլվածքը 9 շրտմաս է և կշռում է 162 կգ, հետևապես 1 մասը կշռում է $162:9=18$ կգ:

Ձուլվածքում 4 մաս պղինձ կա, ուրեմն ըստ շոխ պետք է լինի պղինձ՝ $18 \times 4 = 72$ կգ, կապար՝ $18 \times 3 = 54$ կգ և սնագ՝ $18 \times 2 = 36$ կգ:

Ստուգենք խնդրի լուծումը՝ $72 + 54 + 36 = 162$ կգ — ձուլվածքի ընդհանուր քաշ: Եւ խնդրի ճիշտ է լուծված:

381. Ցեմենտի լուծույթը պարունակում է 8 կշումաս, վորից ցեմենտ՝ 1 մաս, երի շաղախ՝ 1 մաս, ապա 6 մաս: 192 կգ լուծույթ ստանալու համար յուրաքանչյուր յուլից վորքան պիտի վերցնել:

382. Յերկու բաժնի վոր աշխատեցին և ստացան 7 ռ. 68 կոպ: Ամեն մեկին ինչքան կհասնի, յեթե մեկն աշխատել է 5 ժամ, իսկ մյուսը՝ 3 ժամ:

383. Բետոնը պարունակում է 6 կշումաս, վորից ցեմենտ՝ 1 կշումաս, ավաղ՝ 1 կշումաս և խճաքար՝ 4 կշումաս: 144 կգ բետոնի մեջ յուրաքանչյուր նյութից ինչքան է պարունակվում:

384. Բնակարանում ապրում են 3 ընտանիք: Առաջին ընտանիքը բաղկացած է 4 անձից, յերրորդը՝ 2 և յերրորդը՝ 3: Բոլոր տնվորները ջրի համար պետք է վճարեն 7 ռուբլի 47 կոպեկ: Յուրաքանչյուր ընտանիք վորքան պետք է վճարի:

ԲԱԺԱՆՄԱՆ ԴԵՊԵՆՐ, ՅԵՐԲ ԶԵՐՈՆԵՐ ԵՆ ՄՏԱՑՎՈՒՄ

385. Թելի 3 կաժը կշռում է 609 գ 1 կաժն ինչքան է կշռում:

6 հարյուրավորը 3-ի վրա բաժանելիս, քանորդում ստանում ենք 2 հարյուրավոր: Հարյուրավորից մնացորդ չի ստացվում: Տասնավորի փոխարեն բաժանելու մեջ գերո կա: Քանորդում տասնավորի տեղ նույնպես գերո յենք

$$\begin{array}{r} 609 \mid 3 \\ - 6 \quad 203 \\ \hline 9 \\ - 9 \\ \hline 0 \end{array}$$

դնում: Ապա 9 միավորը բաժանում ենք 3-ի վրա և քանորդում ստանում ենք 3 միավոր:

Ստուգեցեք՝ բաժանումը ճիշտ կատարվեց $203 \times 3 =$ Բաժանումը ճիշտ կլինե՞ր, յեթե քանորդում տասնավորի տեղ զերո չդնե՞յինք: Ստուգելու համար բազմապատկեցեք 23-ը 3-ով:

336. 7 հա վուշից ստացվում է 2128 կգ վուշի մանրաթել: 1 հե տարից ինչքո՞ն է ստացվում:

2128 | 7
 — 21 — 304
 — 28
 — 28

2 հազարավորը 7-ի վրա բաժանելիս, քանորդում հազարավոր չի ստացվում: 21 հարյուրավորը բաժանում ենք 7-ի վրա և քանորդում ստանում ենք 3 հարյուր: Հարյուրավորից մնացորդ չի մնում: 2 տասնավորը 7-ի վրա բաժանելիս, քանորդում տասնավոր չենք ստանում: Տասնավորի տեղ քանորդում դնում ենք զերո: 2 տասնավորը միավորի վերածելով և 8 միավորն ել ավելացնելով, ստանում ենք 28 միավոր: 28 միավորը 7-ի վրա բաժանելով, քանորդում ստանում ենք 4 միավոր:

Բաժանման ճշտությունն ուսուցեցեք բազմապատկումով՝ $304 \times 7 =$

387. Լուծեցեք հետևյալ որինակաները.

408:2=	609:2=	408:4=	1206:6=
604:2=	903:3=	804:4=	1407:7=
806:2=	909:2=	505:5=	1608:8=

388. Լուծեցեք հետևյալ խնդիրները.

832:4=	8549:7=	5463:9=	4224:6=
954:9=	4124:8=	8172:9=	4221:7=
636:6=	3648:6=	4854:6=	4563:9=
924:2=	8624:4=	6372:9=	6432:8=

389. Լուծեցեք հետևյալ որինակաները.

4028:4=	5035:5=	8048:8=	12024:4=
9027:3=	8006:2=	9012:3=	36027:9=
8408:4=	9603:3=	9608:4=	56032:8=

390. Տրակտորին կցել են 2 միատեսակ կոմբայն: Նրանց ընդդրվման չափն է 1216 սմ: 1 կոմբայնի ընդդրվման չափը վո՞րջա՞ն է:

391 Փուռը գործադրեց (մսխեց) 912 կգ ալյուր: Այդ ալյուրից վո՞րջա՞ն հաց թխվեց, յեթե լուրաքանչյուր 3 կգ ալյուրից ստացվում է 4 կգ հաց:

392. 7 մ յերկարության քառակուսի յերկաթը (30 սմ հաստությամբ) կշռում է 21196 գ: Այդ յերկաթի 1 մետրը վո՞րջա՞ն է կշռում:

393. Տնահաշվարկային ցեխը զլանելու համար գործարանի վարչությունից ստացավ 6 տոնն պղնձե ձող՝ 6342 ուլբլի արժողությամբ: Ի՞նչ արժեք մի տոնն ձողը:

394. Մի բրդադ 8 հա հողամասից հավաքեց 7254 կգ վարսակ: Մի ուրիշ բրդադ 7 հա հողամասից հավաքեց 6321 կգ վարսակ: 1 հեկտարից վո՞ր բրդադն ավելի շատ հավաքեց և քանի՞ կիլոգրամ ավելի:

395 Փուռը թխեց 816 կգ հաց: Դրա համար ինչքա՞ն ալյուր ծախսեց, յեթե 4 կգ հացի համար ծախսում է 3 կգ ալյուր:

396. 8 հոգուց բաղկացած բրդադը տասնորյակում ըաց թողեց 1680 ուլբլու արտադրանք: Մի՞շին թվով մի բանվորին քանի՞ ուլբլի յե ընկնում:

$$\begin{array}{r} 1680 \overline{) 8} \\ 16 \overline{) 210} \\ 8 \\ 8 \end{array}$$

16 հարյուրը 8-ի բաժանելիս, քանորդում ստանում ենք 2 հարյուրավոր: 8 տասնավորը 8-ի բաժանելիս, քանորդում ստանում ենք 1 տասնավոր: 8 տասնավորը 8-ի բաժանելիս մնացորդ չի ստացվում: Բաժանելի մեջ միավորի տեղ զերո կա, քանորդում միավորի տեղ նույնպես զերո յենք դնում: Այդպես քանորդում ստանում ենք 210:

Բաժանումը ճիշտ կլինե՞ր, յեթե քանորդի վերջում զերո չդնեյինք:

Պատասխանն ստուգեցեք բազմապատկման միջոցով:

$$210 \times 8 =$$

$$21 \times 8 =$$

397. Տրակտորին կցված 5 շարքացանի բռնած տարածությունը 2000 սմ է: Վորքան է 1 շարքացանի բռնած տարածությունը:

$$\begin{array}{r} 2000 \overline{) 5} \\ 20 \overline{) 400} \end{array}$$
 20 հարյուրը 5 վրա բաժանելիս, մնացորդ չի ստացվում: Բաժանելի մեջ տասնավորի և միավորի տեղ զերոնք կան: Քանորդում է միավորի տեղ նույնպես զերոնք ենք դնում:

Պատասխանն ստուգեցեք բազմապատկման միջոցով: $400 \times 5 =$

Բաժանումը ճիշտ կլինե՞ր, յեթե քանորդում զերոնք չդնեյինք: Ստուգեցե՞ք՝ $4 \times 5 =$

398. Լուծեցեք հետևյալ որինակները.

$1640:4=$	$4500:3=$	$48000:6=$	$10200:6=$
$1200:6=$	$8100:9=$	$81000:9=$	$212800:7=$
$4590:9=$	$6000:5=$	$64000:8=$	$253000:5=$
$5600:7=$	$12800:8=$	$201500:5=$	$720360:9=$
$7850:5=$	$60420:6=$	$73570:7=$	$325080:8=$

Ավտոմատ մեքենան 7 ժամում կտրում է 24923 հեղույս: 1 ժամում քանի՞ հեղույս է կտրում:

$$\begin{array}{r} 24923 \overline{) 7} \\ 21 \overline{) 3560} \\ 39 \\ 35 \\ 42 \\ 42 \\ 3 \end{array}$$
 24 հազարը 7-ի վրա բաժանելիս, քանորդում ստանում ենք 3 հազարավոր. 39 հարյուրը 7-ի վրա բաժանելիս, ստանում ենք 5 հարյուրավոր: 42 տասնյակը 7-ի վրա բաժանելիս մնացորդ չի ստացվում: Բաժանենք 3 միավորը 7-ի վրա: Քանորդում միավոր չենք ստանում (3-ը 7-ից փոքր է): Քանորդում միավորի տեղ դնում ենք զերո: Մնացորդը կլինի 3:

399. Լուծեցեք հետևյալ որինակները.

$2382:7=$	$1043:4=$	$52003:8=$
$3364:6=$	$5203:8=$	$43207:9=$
$4902:5=$	$2352:5=$	$21421:7=$
$8015:9=$	$5343:6=$	$30483:6=$

400. 5 մեքենա յուղելու համար որական ծախսում են 350 գ յուղ: Մի մեքենայի վրա միջին թվով ինչքան յուղ են ծախսում:

401. 8 խորանարդ մետր խճաքարը կշռում է 12800 կգ: 1 խոր. մետրը վորքա՞ն է կշռում:

402. Ավտոմոբիլի 7 մոտորը կշռում է 5257 կգ: 1 մոտորը վորքա՞ն է կշռում:

403. Բեռնած ձին 6 ժամում անցավ 19202 մ տարածություն: 1 ժամում միջին թվով քանի՞ մետր անցավ:

404. 9 խոր. մետր ավազը կշռում է 13312 կգ: 1 խորանարդ մետրը վորքա՞ն է կշռում:

405. Չորս կալսիչով մի որում կալսեցին 6021 խուրձ:

Մի կարծիքը միջին թվով քանի՞ խոճ է կախում:

406. Մոսկվայի մարզում «1» 1931 թվին 3 մսի խորհանտեսութուն՝ 101820 մ տարածությամբ: 1 մսի խորհանտեսությանը մի՞ թվով քանի՞ հեկտար է ընկնում:

407. 8 հա չրովի մարգագետնից ստացվեց 16240 կգ խոտ, իսկ 7 գառնջրդի մարգագետնից՝ 7350 կգ խոտ: 1 հա առնջրդի մարգագետնից քանի՞ կիրովբամ պակաս խոտ ստացվեց:

408. ԽՍՀՄ-ի ԲՏՈՒՀ-ներում 1931 թվին սովորում էին 240000 մարդ, իսկ Գերմանիայում՝ 6 անգամ պակաս: ԽՍՀՄ-ի ԲՏՈՒՀ-ներում սովորողների թիվը քանի-սո՞վ ավելի յե Գերմանիայում սովորողների թվից:

409. Բրիգադն առաջադրանք ստացավ 7 որում 420 հա ցորեն հավաքելու: Նույն աշխատանքը կատարելու համար քանի՞ մեքենա յե պետք, յեթե մեքենայի որական նորման է 5 հա:

8 խորանարդ մետր չոր ավազը կշռում է 11071 կգ, իսկ 6 խորանարդ մետր թաց ավազը 8629 կգ: Չոր ավազի 1 խորանարդ մետրը միջին թվով ինչքա՞ն է կշռում: Ինչքա՞ն է կշռում թաց ավազի 1 խորանարդ մետրը:

I.	11071 8	II.	8629 6
	8		6
	1383		1438
	30		26
	24		24
	67		22
	64		18
	31		49
	24		48
	7		1

Առաջին դպրում 7 մնացորդը բաժանարարի կեսից մեծ է (բաժանարարի կեսը 4 է): Յերկրորդ դեպքում 1 մնացորդը բաժանարարի կեսից փոքր է (բաժանարարի կեսը 3 է): Վորպեսզի ստանանք ավելի ճիշտ պատասխան, մեծացնենք առաջին քանորդը (1384) մեկ միավորով, իսկ յեկրորդ քանորդը (1438) թողնենք անփոփոխ:

1 խոր. մետր չոր ավազի միջին քաշն է 1384 կգ

1 խոր. մետր թաց ավազի միջին քաշն է 1438 կգ:

Յեթե բաժանելիս մնացորդը հավասար է բաժանարարի կեսին կամ մեծ է կեսից, ապա քանորդը մեծացնում են մեկ միավորով: Յեթե մնացորդը բաժանարարի կեսից փոքր է, ապա քանորդը թողնում են անփոփոխ:

410. Լուծեցեք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lll} 15647:6= & 5018:5= & 12828:8= \\ 7562:9= & 17502:7= & 18726:9= \end{array}$$

411. Առաջին որը դաշտից կրեցին 621 խուրձ, յեկրորդ որը՝ 865 խուրձ, յերրորդ որը՝ 983 խուրձ և չորրորդ որը 860 խուրձ: Որական միջին թվով քանի՞ խուրձ կրեցին:

Ցուցմունք. — Նախ իմանանք, թե 4 որում ընդամենը քանի՞ խուրձ կրեցին՝ $621 + 865 + 983 + 860 = 3329$, իսկ հետո բաժանենք 4-ի վրա:

412. Բանվորն առաջին ամսին խնայդրամարկը մու-

եց 38 ուրբի, յեկրորդ ամսին՝ 45 ուրբի, յերրորդ ամսին՝ 36 ուրբի, չորրորդ ամսին՝ 50 ուրբի, հինգերորդ ամսին՝ 24 ուրբի և վեցերորդ ամսին՝ 35 ուրբի: Բանվորն ամսական միջին թվով քանի՞ ուրբի մոծեց:

413. Բրիգադն առաջին որը բաց թողեց 358 ուրբու արտադրանք, յերկրորդ որը՝ 374 ուրբու, յերրորդ որը՝ 402 ուրբու, չորրորդ որը՝ 395 ուրբու և հինգերորդ որը՝ 416 ուրբու: Բրիգադի մի որվա միջին արտադրանքն ինչքան է:

414. ԽՍՀՄ-ում 1933 թվի մարտ ամսի 5 որերին հայեցին 81648 Տ թուջ: Այդ որերին ԽՍՀՄ-ում որական միջին թվով ինչքան թուջ էյին հալում:

415. Խորհրդային Միությունում 9 կովից մի տարում ստացվեց 25251 կգ կաթ, իսկ կոլտնտեսությունում 7 կովից մի տարում ստացվեց 16453 կգ կաթ: Խորհրդային Միությունում մի կովից մի տարում ստացված կաթը քանի՞ կիլոգրամ ավելի յե նույն ժամանակամիջոցում կոլտնտեսությունում մի կովից ստացված կաթից:

416. Կոլտնտեսությունը 1931 թվին ցանեց 504 հա, փորից յուրաքանչյուր տնտեսության ընկնում էր 6 հա: Այդ կոլտնտեսությունը 1932 թվին ցանեց 2124 հա, փորից յուրաքանչյուր տնտեսության ընկնում էր 9 հա: 1932 թվին կոլտնտեսությունում քանի՞ տնտեսություն ավելի կար, քան 1931 թվին:

417. Բեռնատար ավտոմոբիլը փորձական վազքի ժամանակ 2 ժամում անցավ 48-ական կմ, հաջորդ 4 ժամում՝ 45-ական կմ և վերջին 3 ժամում՝ 46-ական կմ: Գտե՛ք բեռնատար ավտոմոբիլի միջին արագությունը:

418. Սիլոսի աշտարակից վերցրած 9 խոր. մետր

սիլոսը կշռում է 6255 կգ, իսկ սիլոսի հորից վերցրած 8 խոր. մետր սիլոսը՝ 4192 կգ: Սիլոսի աշտարակից վերցրած 1 խոր. մետր սիլոսը քանի՞ կիլոգրամ ծանր է սիլոսի հորից վերցրած 1 խոր. մետր սիլոսից:

419. Ձեռքով մի որում 1 հա սոխ տնկելու համար պահանջվում է 25 մարդ: Շարքացանով 2 մարդ մի որում ցանում են 6 հա: Շարքացանը քանի՞ անգամ է ավելացնում 1 բանվորի արտադրողականությունը:

420. Հացահատիկի գումակը բաղկացած էր 21 սայլից: Սայլերից 7-ի վրա կար 5600 կգ հացահատիկ, 9-ի վրա՝ 6480 կգ, իսկ փառած սայլերի վրա՝ 3350 կգ: Յուրաքանչյուր սայլի վրա միջին թվով ինչքան հացահատիկ կար:

Մ Ե Մ Թ Վ Ե Ր

Նայեցե՛ք ստորև տրված կարգերի ցանցը:

միլիարդների դաս (մլրդ)			միլիոնների դաս (մլն)			հազարների դաս		միավորների դաս			
Կ ա Ր Գ Ե Ր											
12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1
միլիարդներ	տասնավորներ	միլիարդներ	հարյուրավորներ	տասնավորներ	միլիարդներ	հարյուրավորներ	տասնավորներ	միլիարդներ	հարյուրավորներ	տասնավորներ	միլիարդներ

Յեթե 900 հազարին ավելացնենք 100 հազար, ապա կստանանք 1000 հազար, կամ 1 միլիոն: 1 միլիոնը թվաշաններով գրվում է այսպես՝ 1000000:

421. Միլիոնը քանի՞ հազարի յե հավասար:

422. Կարդացեք հետևյալ թվերը՝ 7000000, 2000000, 8000000, 6000000:

423. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ 3 միլիոն, 7 միլիոն, 9 միլիոն:

424. 4-ի աջ կողմ քանի՞ զերո պետք է գրել, վեր ստացվի 4 միլիոն:

425. Կարդացեք հետևյալ թվերը՝ 20000000, 30000000, 10000000, 7000000, 4500000, 200000000, 104000000:

426. Թվանշաններով գրեցեք՝ 15 միլիոն, 60 միլիոն 24 միլիոն, 300 միլիոն, 508 միլիոն, 100 միլիոն, 250 միլիոն, 802 միլիոն:

427. Թվի մեջ, աջ ձեռքից զեպի ձախ, վերանդ են գտնվում միլիոնների միավորները, միլիոնների տասնավորները, միլիոնների հարյուրավորները:

428. Ստացեք միավորների դասի կարգերը, հազարավորների դասի կարգերը, միլիոնների դասի կարգերը:

429 Կարդացեք հետևյալ թվերը՝

8050060	40000567	80000004
7009065	70050008	90007006
18000076	90506070	14000085
3020004	508039200	21301000
28074008	40000070	250080006
103004560	600001000	400000075

430. ՌՄՖԽՀ-ում կիսազրադետների և անզրադետ-

ների համար բացված դպրոցներում սովորողների թիվը հետևյալն է.

1927 28 տարի	1928 29 տարի	1929 30 տարի	1930 31 տարի
768464	888960	3454957	4497888
տարի 1931 32 տարի.			
8098000			

Կարդացեք խնդրի թվերը:

431. Տորֆի հանույթը ԽՍՀՄ-ում.

Թվա կան	հանված է տուֆ (տոններով)	Թվա կան	հանված է տորֆ (տոններով)
1929	5449000	1931	10500000
1930	6500000	1932	13835000

Կարդացեք խնդրի թվերը:

432. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ յերեք միլիոն քսան վեց հազար ութ, հիսուն միլիոն յերկու հարյուր հազար քառասուն, յոթանասուն միլիոն հարյուր ութ, վեց հարյուր հինգ միլիոն յերկու հազար իննսուն, քսան մեկ միլիոն վաթսուն հազար հինգ հարյուր ութ, հարյուր ինն միլիոն ութ, հարյուր ինն միլիոն ութ հարյուր հազար մեկ, ինն հարյուր քառասուն միլիոն յերեք հազար յոթ հարյուր, ութսուն հինգ միլիոն քսան հազար, քսան միլիոն հիսուն վեց, յոթանասուն միլիոն քառասուն:

433. Աշխարհի ամենամեծ լերկրների բնակչությունը 1921 թվին.

Յեկերի անունը	Բնակչության թիվը
Զինաս- տան	Զորս հարյուր հիսուն յերկու միլիոն յոթ հարյուր հազար
Հնդկաս- տան	Յերեք հարյուր հիսուն յերկու միլիոն յերեք հար- յուր հազար
ԽՍՀՄ	Հարյուր վաթսուն միլիոն ինն հարյուր հազար
ՀԱՄՆ	Հարյուր քսան յերեք միլիոն վեց հարյուր հազար
Ճապո- նիա	Վաթսուն չորս միլիոն յոթ հարյուր հազար
Գերմա- նիա	Վաթսուն չորս միլիոն յոթ հարյուր հազար
Անգլիա	Քառասուն հինգ միլիոն ինն հարյուր հազար
Ֆրանս- սիա	Քառասուն մեկ միլիոն ութ հարյուր հազար
Իտալիա	Քառասուն մեկ միլիոն հարյուր հազար
Հնաս- տան	Յերեսուն յերկու միլիոն յերկու հարյուր հազար

Աղյուսակի թվերը զրեցեք թվանշաններով:
434. Աձխի հանույթը ԽՍՀՄ-ում.

Թվա- կան	Հանույթը տոններով
1928	Յերեսուն հինգ միլիոն ութ հարյուր ութսուն հազար
1929	Քառասուն մեկ միլիոն վեց հարյուր վաթսուն չորս հազար
1930	Քառասուն յոթ միլիոն հիսուն յերկու հազար
1931	Հիսուն յերեք միլիոն հինգ հարյուր քառասուն չորս հազար
1932	Վաթսուն չորս միլիոն

Աղյուսակի թվերը զրեցեք թվանշաններով.

435. Հուճեցեք հետևյալ որինակն՝ ըը

2063540 + 76200529

830758600 + 39002870

9048002 - 2839563 =

160300040 - 53820136

17039104 + 352007348 + 2065009 =

3036258 + 12563942 - 10875064 =

71008416 - 3824921 + 6710538 =

80040005 - 26091206 - 18359140 =

436. Առ 1 1932 թվի Համկի բ) ուներ 1632816 անդամ և 1250345 թեկնածու: Ընդամենը քանի՞ անդամ և թեկնածու ուներ կուսակցությունը:

437. 1931 թվին Համկի բ) շարքերում կար 1379020 բանվոր, 458407 գյուղացի և 228673 ծառայող: Համկի բ) շարքերում 1931 թվին ընդամենը քանի՞ մարդ կար:

438. 1931 թվի մարտին Գերմանիայում կար 4374000 գործազուրկ, իսկ 1933 թվի մարտին գործազուրկները թիվն ավելացավ 1628000 հոգով: 1933 թվի մարտին Գերմանիայում քանի՞ գործազուրկ կար:

439. 1931 թվին ԽՍՀՄ-ի ցանքսերի ընդհանուր տարածությունը հավասար էր 138000000 հա: 1937 թվին ցանքսերի տարածությունը պետք է մեծանա 37000000 հեկտարով: 1937 թվին ցանքսերի տարածությունն ինչ-քան պիտի լինի:

440. 1928 թվին ԽՍՀՄ բանվորների և ծառայող-ների ընդհանուր թիվը հավասար էր 11591000 մարդու: 1932 թվին՝ 22360000 մարդու: Առաջին հնգամյակում ԽՍՀՄ բանվորների և ծառայողների թիվն ինչքան ավելացավ:

441. 1932 թվին ԽՍՀՄ պրոֆմիությունների մեջ կար 1104250 անգրագետ և 2178780 կիսագրագետ: Սրանցից սովորում էին 1546144 հոգի: Քանի՞ կիսագրագետ և անգրագետ չեյին ընդգրկված գյուղացիներում:

442. Նավթի հանույթը ԽՍՀՄ-ում.

Թվական	Հանույթը տոններով
1929	14755500
1930	18900000
1931	22322000
1932	22200000
Ընդամենը	.

Հաշվեցեք՝ առաջին հնգամյակում ԽՍՀՄ-ում վճարված նավթի և հանվել.

443. ԽՍՀՄ խոշոր մեքենաշինարարական գործարանների ընդհանուր արտադրանքը.

Գործարանի անունը	1928 թվի արտադրանքը (ոուր-լիներով)	1932 թվի արտադրանքը (ոուր-լիներով)	1932 թվի արտադրանքը 1928 թվի արտադրանքից քանի՞ օուր-լինով և ավելի
Ստալինի անվան ավտո գործարան	12875000	167000000	.
«Կարմիր պուտիլովցե» ավտոգործարան	11327000	150000000	.
Խարկովի ելեկտրո-մեխանիկական գործարան	4458000	163000000	.
Պոզոսկի կարի մեքենաների գործարան	38825000	99600000	.
«Հոկտեմբերյան հեղափոխության» անվան լուգանսկի գործարան	17101000	57300000	.
«Դինամո»	24588000	49200000	.
«Երկարալի»	10705000	49000000	.
«Երկարալի»	707000	24400000	.

Յուրաքանչյուր գործարանի 1932 թվի արտադրանքը 1928 թվի արտադրանքից քանի՞ օուր-լինով և ավելի:

900 միլիոն + 100 միլիոն = 1000 միլիոն, կամ 1 միլիարդ:

444. Միլիարդի մեջ քանի՞ միլիոն կա:

445. Կարդացեք հետևյալ թվերը՝ 2000000000, 6000000000, 3000000000, 7000000000, 4000000000, 8000000000:

446. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ 5 միլիարդ, 8 միլիարդ, 9 միլիարդ:

447. 7-ի աջ կողմը քանի՞ գերո պետք է գրեք, վոք ստանաք 7 միլիարդ:

448. Կարդացեք հետևյալ թվերը՝ 4000000000, 7000000000, 34000000000, 16000000000, 60000000000, 25000000000, 80400000000, 72500000000:

449. Թվանշաններով գրեցեք հետևյալ թվերը՝ 50 միլիարդ, 35 միլիարդ, 80 միլիարդ, 120 միլիարդ, 500 միլիարդ, 805 միլիարդ:

450. Այլ ձևերից դեպի ձախ՝ վերադառնալով հին գտնվում միլիարդի միավորները, միլիարդի տասնավորները, միլիարդի հարյուրավորները:

451. ԽՍՀՄ-ի միասնական պետական բյուջեն 1933 թվին.

Ց Ն Յ Ս Մ Ո Ւ Տ		Ծ Ա Խ Ս	
Ցեկամտի անունը	աուբլի	ծախսի անունը	աուբլի
1. Համայնացրած տնտեսութունից	28748912000	1. Ժող-անտեսութ. վրա	23912066000
2. Բնակչության միջոցների մոբիլիզացիայից	5364420000	2. Սոց-կուլտ կարիքներ.	2393104000
Այլ յեկամուտներ	897588000	3. Պաշտպանության և կառավարման վրա	2264431000
Ընդամենը	35010920000	4. Պետ փոխառության	1330000000
		5. Տեղական բյուջաներին	1949403000
		6. Այլ ծախսեր	1381916000
		7. Պետական սեզերի.	1780000000
		Ընդամենը	35010920000

Կարդացեք խնդրի թվերը:

452. Ցարական Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը.

1913 թվին	1928 թվին	1932 թվին
Ինն միլիարդ լերկու հարյուր հիսուն միլիոն ռուբլի	Տասնհինգ միլիարդ վեց հարյուր վաթսու միլիոն ռուբլի	Յերեսուն չորս միլիարդ յերեք հարյուր միլիոն ռուբլի

Աղյուսակի թվերը գրեցեք թվանշաններով:

Թիվը 10, 100 և 1000 ԱՆԳԱՄ ՄԵԾԱՑՆԵԼԸ

453. Մի տուփ լուցկին արժե 3 կոպեկ: 10 տուփն ինչ արժե:

454. Մի տակաոին հագցնում են 6 շրջանակ: 10 տակաոին քանի շրջանակ պիտի հագցնեն:

455. Մի մատիտն արժե 15 կոպեկ: Նույն տեսակի 10 մատիտն ինչ արժե:

456. Թիվը 10 անգամ մեծացնելու համար ինչ պետք է անել:

457. Հետևյալ թվերից յուրաքանչյուրը մեծացրեք 10 անգամ.

7, 3, 8, 12, 25, 132, 180, 400, 750, 809, 506:

458. Մի բանվոր մի ուրում արտադրում է 9 մ գործվածք: 10 բանվոր մի ուրում քանի մետր գործվածք կարտադրեն:

459. Մի անցք շաղափելու համար պետք է գործադրել 3 բուլե: 100 անցք շաղափելու համար քանի բուլե պետք է գործադրել:

460. Մի տետրակն արժե 6 կոպեկ: 100 տետրակն ինչ արժե:

461. Մի տոնն լաթ մաքրելն արժե 8 ռուբլ: 100 ռ լաթ մաքրելն ինչ արժե:

462. Թիվը 10 անգամ մեծացնելու համար ինչ պիտի անենք: Իսկ 100 անգամ մեծացնելու համար ինչ պիտի անենք:

463. Հետևյալ թվերից յուրաքանչյուրը մեծացրեք 100 անգամ՝ 4, 9, 5, 11, 19, 62, 90, 76, 31, 40, 59, 25, 70:

464. 1 խոր. մետր քարի շարվածքը կշռում է 3 տոն: 100 խոր. մետր ալդալիսի շարվածքն ինչքան է կշռում:

465. Կոլանտեսությունում 1 ձիուն ընկնում է 18 հա վարելահող, 100 ձիուն ինչքան վարելահող է ընկնում:

466. 1 մ մետաղալարը կշռում է 6 գ (զրամ : 100 մ ալդպիսի մետաղալարն ինչքան է կշռում:

467. Մի աղյուսը կշռում է 4 կգ, 1000 աղյուսն ինչքան է կշռում:

468. Յիվը 1000 անգամ մեծացնելու համար ինչ պիտի անենք:

469. Հետևյալ թվերից յուրաքանչյուրը մեծացրեք 100 անգամ 7, 4, 6, 3, 5, 2, 8, 9:

470. 1 հեկտարից հավաքեցին 8 ց ցորեն: 1000 հեկտարից քանի ցենտներ հավաքեցին:

ԹՎԵՐԸ 10, 100 և 10 0 ԱՆԳԱՄ ՓՈՔՐԱՑՆԵԼԸ

471. Տրակտորով 10 ժամում ցանեցին 50 հա, նույն տրակտորով 1 ժամում քանի հեկտար կցանեն:

472. Դրամարկդում կա 1370 ուրլի չերվոնեց (10 ուրլիանոց): Դրամարկդում քանի հատ չերվոնեց կա:

473. 3870-ը 10 անգամ փոքրացնելու համար ինչ պիտի անենք:

474. Հետևյալ թվերից յուրաքանչյուրը փոքրացրեք 10 անգամ 40, 70, 90, 360, 120, 400, 4560, 8200, 700, 3000, 9000:

475. 100 հա հաճարից հավաքեցին 900 ց: 1 հա-ի բերքն ինչքան է:

476. 100 հատ միատեսակ մեխի քաշը 800 գ է: 1 մեխի քաշը փոքրան է:

477. 3900-ը 100 անգամ փոքրացնելու համար ինչ պիտի անել:

478. Հետևյալ թվերից յուրաքանչյուրը փոքրացրեք 100 անգամ 200, 500, 900, 700, 300, 1200, 2800, 4000, 6000, 3100:

479. 1000 մ գործվածքն արժե 8000 ուրլի: 1 մ գործվածքն ինչ արժե:

480. 1000 արկի քաշը 9000 կգ է: 1 արկի քաշը փոքրան է:

481. 2 090-ի 1000 անգամ փոքրացնելու համար ինչ պիտի անենք:

482. Հետևյալ թվերից յուրաքանչյուրը փոքրացրեք 1000 անգամ 7000, 3000, 5000, 2000, 9000, 4000 6000:

483. 1000 հատ միատեսակ յերկաթե ձողի քաշը 6000 կգ է: 1 ձողի քաշը փոքրան է:

484. 85-ը մեծացրեք 100 անգամ, 70-ը՝ 10 անգամ, 2-ը՝ 100 անգամ, 35-ը՝ 10 անգամ, 50-ը՝ 100 անգամ, 40-ը՝ 100 անգամ:

485. 7000-ը փոքրացրեք 1000 անգամ, 5000-ը՝ 100 անգամ, 4000-ը՝ 100 անգամ, 600-ը՝ 100 անգամ:

ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՏՐԱԿԱՆ ՉԱՓԵՐԸ

Յերկարության հիմնական չափը մետրն է:



1 կմ=1000 մ.

1 մ=10 դմ=100սմ=1000 մմ.

1 դմ=10 սմ=100 մմ,

1 սմ=10 մմ,

486. Խնչպես ե կոչվում յերկարության հիմնական չափը:

487. Քանոնի վրա ցույց տվեք 1 դմ, 1 սմ, 1 մմ:

488. 1 մետրը քանի՞ դեցիմետրի յե հավասար:

489. 1 դմ-ը քանի՞ սանտիմետրի յե հավասար:

490. 1 մ-ը քանի՞ սանտիմետրի յե հավասար:

491. 1 սմ-ը քանի՞ միլիմետրի յե հավասար:

492. 1 դմ-ը քանի՞ միլիմետրի յե հավասար:

493. 1 մ-ը քանի՞ միլիմետրի յե հավասար:

494. 1 կմ-ը քանի՞ մետրի յե հավասար:

495. քանի՞ սանտիմետրի յե հավասար՝ 5 մ-ը, 7 մ-ը, 9 մ-ը:

496. Քանի՞ միլիմետրի յե հավասար՝ 7 մ-ը, 5 մ-ը, 4 մ-ը, 6 մ-ը:

497. Քանի՞ մետրի յե հավասար 4 կմ-ը 8 կմ-ը, 3 կմ-ը, 6 կմ-ը:

498. Ընդամենը քանի՞ սանտիմետրի յե հավասար 3 մ 2 դմ 4 սմ-ը, 2 մ 5 դմ-ը, 5 մ 7 սմ-ը, 7 մ 9 սմ-ը, 6 դմ-ը, 8 սմ-ը:

499. Ընդամենը քանի՞ միլիմետրի յե հավասար՝ 9 մ 8 դմ 4 սմ 2 մմ, 3 դմ 7 սմ 8 մմ-ը, 4 մ 2 դմ 7 մմ-ը:

500. Սանդերքով դոդո մեքենայի յերկարությունը 4 մ 2 սմ ե լայնությունը՝ 1 մ 4 սմ: Մեքենայի յերկարությունն ու լայնությունն արտահայտեցեք սանտիմետրներով:

